

**Հարցաշար**  
**Առարկայական օլիմպիադայի**  
**«Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի**  
**Հանրապետական փուլ - 2021**  
**8-րդ դասարան - 120 րոպե**

N 1-4

*Ընտրովի պատասխանով առաջադրանքներ*  
*(0,5 x 4 = 2 միավոր)*

1. Ո՞ր կաթողիկոսն է հաջորդում Ջաքարիա Ա. Չազեցուն. *(0,5 միավոր)*
- 1) Հովհաննես Ե. Դրասխանակերտցի
  - 2) Անանիա Ա. Մոկացի
  - 3) Գևորգ Բ. Գառնեցի
  - 4) Խաչիկ Ա. Արշարունեցի
2. Ո՞ւմից է սատարողական նամակ ստանում Հովհաննես Ե. Դրասխանակերտցին. *(0,5 միավոր)*
- 1) Դամասկոսի խալիֆից
  - 2) Կ. Պոլսի պատրիարքից
  - 3) Վասիլ II կայսրից
  - 4) Յուսուֆ ամիրայից
3. Ո՞ր կաթողիկոսությանն էին ենթարկվում Ջաքարյան Հայաստանում գտնվող եկեղեցական թեմերը. *(0,5 միավոր)*
- 1) Հռոմկլայի Հայոց կաթողիկոսության
  - 2) Սսի կաթողիկոսության
  - 3) Ս. Էջմիածնի կաթողիկոսության
  - 4) Աղթամարի կաթողիկոսության
4. Ո՞ր թվին է գումարվել Հայոց առաջին ազգային-եկեղեցական ժողովը. *(0,5 միավոր)*
- 1) 354 թ.
  - 2) 353 թ.
  - 3) 352 թ.
  - 4) 356 թ.

N 5-9

*Կառուցված պատասխանով առաջադրանքներ*  
*(1 x 5 = 5 միավոր)*

5. Մետրոպոլիտությունը \_\_\_\_\_ տրված առանձնաշնորհումն էր: *(1 միավոր)*

6. Բագրատունյաց թագավորության անկումից առաջ և հետո հայ ազգաբնակչությունը զանգվածաբար արտագաղթում է դեպի \_\_\_\_\_: (1 միավոր)

7. Գող Վասիլի իշխանության քայքայումը ստիպում է Գրիգոր Գ.-ին հայրապետական աթոռը տեղափոխել \_\_\_\_\_, որտեղ այն մնում է \_\_\_\_\_ տարի: (1 միավոր)

8. Գրերի գյուտից հետո թարգմանական գրականությանը զուգահեռ ստեղծվում էր նաև նոր՝ \_\_\_\_\_ (1 միավոր)

9. \_\_\_\_\_ չէին ընդունում, որ Քրիստոս ծնվել է Մարիամ Աստվածածնից, այսինքն՝ ժխտում էին Նրա մարդկային էությունը: (1 միավոր)

### N 10-11

#### Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4-5 փաստից

10. Կատարել համապատասխանեցում. (1 միավոր)

- |              |                 |
|--------------|-----------------|
| 1. փութանակի | ա. քահանա       |
| 2. երեց      | բ. ասեղնագործած |
| 3. ակեխոով   | գ. մարգարե      |
| 4. բանված    | դ. հապճեպ       |
|              | ե. փոթորկված    |

1	
2	
3	
4	

11. Իրադարձությունը համապատասխանեցնել տարերթվին. (1 միավոր)

- |  |            |
|--|------------|
| 1. Հակոբ Դ. Ջուղայեցու գլխավորած պատվիրակության Կ. Պոլիս ժամանումը | ա. 1895 թ. |
| 2. Ս. Մովսես Գ. Տաթևացու կաթողիկոսացումը                           | բ. 1678 թ. |
| 3. Սյունյաց մետրոպոլիտության դադարումը                             | գ. 1465 թ. |
| 4. Սմբատ Արծրունու թագավորական օծումը                              | դ. 1764 թ. |
| 5. Աղթամարի կաթողիկոսության դադարումը                              | ե. 1837 թ. |
|  | զ. 1629 թ. |

1	
2	
3	
4	
5	

### N12-13

#### Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

12. «XIII-XIV դարերի ուսումնական-մշակութային կյանքի նշանավոր կենտրոններից մեկն էր ... վանքի համալսարանը: Համալսարանը միջնադարում հայտնի է եղել իբրև «երկրորդ Աթենք», «մայրաքաղաք իմաստունների» և այլն»:

1. Ո՞ր վանքի ու համալսարանի մասին է խոսքը: (1 միավոր)

\_\_\_\_\_

2. Ո՞ւմ աշխատությունից է առնված այս հատվածը: (1 միավոր)

\_\_\_\_\_

13. «Գիտությամբ հռչակված այս մարդը Գանձակ քաղաքից էր, քրիստոնյա ծնողների զավակ, ուլքեր նրան տվեցին Սուրբ Գրքի ուսման: Իսկ էրբ չափահաս դարձավ, ձեռնադրվեց կուսակրոն քահանա: Երկար տարիներ իբրև կուսակրոն քահանա ծառայելով՝ կամեցավ նաև հմտանալ Սուրբ Գրքի ուսման և առակների մեկնության մեջ»:

1. Ու՞մ աշխատությունից է մեջբերումը: (1 միավոր)

\_\_\_\_\_

2. Ու՞մ մասին է խոսքը: (1 միավոր)

\_\_\_\_\_

#### N 14-16

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն պահանջող առաջադրանքներ:

#### N 14

14.1. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ու՞մ անունն է ավելորդ: (0,5 միավոր)  
Մեռոն, Ծես, Զրահանդերձ, Բաղարջ, Նշխար:

14.2. Ի՞նչ սկզբունքով է կազմված շարքը: Տվյալ շարքում ո՞րն է ավելորդ: (0,5 միավոր)  
Հովհաննես Ե. Դրասխանակերտցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Խաչիկ Բ. Անեցի, Առաքել Դավրիժեցի:

#### N 15

15.1. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: (1 միավոր)

- ա. Ղևոնդիոս հայրապետ, Փառեն Ա. Աշտիշատցի, Բաբգեն Ա. Ոթմսեցի  
բ. Մուշե հայրապետ, Զեմենտոս հայրապետ, Շավարշ հայրապետ  
գ. Ատրներսես հայրապետ, Զավեն Ա. Մանազկերտցի, Զաքարիա հայրապետ

15.2. Գտնել ճիշտ շարքը: Ի՞նչ սկզբունքով է այն կազմված: (1 միավոր)

- ա. Հարություն քին. Շմավոնյան, Գաբրիել Ավետիքյան, Սմբատ Արծրունի-Սեֆեդիյան  
բ. Արսեն Բագրատունի, Մաղաքիա արք. Օրմանյան, Հովսեփ արք. Արղության  
գ. Հայր Ղևոնդ Ալիշան, Մխիթար Սեբաստացի, Միքայել Չամչյան

#### N 16

1. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ: (2 x 0.5 = 1 միավոր)

- 1) Սյունյաց իշխան Ռուստամ Օրբելյանը Ս. Էջմիածնին նվիրում է 9 խոշոր գյուղեր:
- 2) Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո կաթողիկոսական աթոռը հայտնվեց բյուզանդական տարբեր իշխանությունների տիրապետության տակ:

- 3) Հովհաննես Որոտնեցու մահվանից հետո Տաթևացին դառնում է Տաթևի համալսարանի ուսուցչատեր:
- 4) Հակոբ Բ. Անավարզեցի կաթողիկոսը հատուկ կոնդակով միարարներին արտոնեց լատինական ծեսով կատարել պատարագ, մկրտություն, հայերին դարձնել հռոմեադավան, և այլն:
- 5) Բյուզանդացիներին պատասխան տալու համար Գրիգոր Դ. կաթողիկոսը 1178 թ. հրավիրում է Հռոմկլայի համահայկական Եկեղեցական ժողովը:


**2. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են սխալ:**

*(2 x 0.5 = 1 միավոր)*

- 1) Բարսեղ Ա.-ն 1080 թ. այցելում է սելջուկյան տերության գահակալ Մելիք Ա. շահին:
- 2) 1203 թ. Գրիգոր Զ. Ապիրատի մահով ավարտվեց Պահլավունիների տոհմի կաթողիկոսական իշխանությունը:
- 3) Հայաստան վերադառնալուց հետո Պետրոս կաթողիկոսը զբաղվել է եկեղեցական կազմակերպական հարցերով:
- 4) Անանիա Ա. Մոկացին վերականգնում է նաև բնականոն հարաբերությունները վրաց կաթողիկոսության հետ:
- 5) Հակոբ Դ. Ջուղայեցին ժամանակի ականավոր հոգևորականներից էր: Մեծ դեր է խաղացել Մայր Աթոռի բարեկարգման գործում, պայքարել Հայաստանում և հայկական գաղթավայրերում գործող կաթոլիկ քարոզիչների դեմ:


**N 17**

**Շարադրանք**

*(2 միավոր)*

Ներկայացրե՛ք Միքայել Ա. Մեբաստացու գործունեությունը և Հայաստանն ազատագրելու Ստեփանոս Ե. Սալմաստեցու ծրագիրը: